25. ԿՅԵՌԹՆՈՒԿ ԱԽՃԻԳՅԸ

Ինում ա, չինում մին թաքավեր։ Էտ թաքավերեն ինում ա իրեք տղա, իրեքն էլ շատ խելուք ըն ինում, հորը խոսքավն ըն քյնում։ Էտ տղերքը մծանում ըն։

Մեհեստ էտ տղերքը ուրանց հորն ասըմ ըն. — Ա՛ հաը, օղում ընք փսակվինք։

Հաըն ասում ա. — Ցրես էլ ըմ համոզ, մինակ մին պայմանավ։

Թաքավերը պերըմ ա տղորանցը ամեգյը մին թունվանգյ տամ, ասում. — Տըրքցրե՛ք, ամմա հուր գյուլլա շենն ընգավ, ընդրան շենումն ըմ փսկլական, հուր գյուլլա էլ վեր շենան տուս եկավ, ընդրան աշկս տեսնա հուչ, տանան տուս ըմ քըցլական։

Թաքավերեն տղերքյը իրեքան յոր ըն օնում թունվընգյնեն տրքցնում։

Մեծ նան մաշնակ տղորանցը գյուլլան շենն ա ընգնըմ, ամմա կուճուր տղեն գյուլլան շենան տուս ա վեր ընգնըմ։

Թաքավերը թունգումը կըզնվում ա, պրծնըմ, կուճուր տղեն տանան տուս քցըմ, էն էրկու տղեն էլ առոք-փառոք հրսանիք ա անըմ, պըլատումը թողըմ։

Թաքավերն նան ուրան էրկու տղէն թողինք ըտեղ, տեսնանք էն խեղճ կուճուր տղան՝ Սարումը հի՞նչ ա տեռնում։

Կուճուր տղան շատ մտածելանը ետը կլոխ ա եր օնում, քյնում։ Քյնամ ա, քյնամ, մին կյետու քշտի նստում, լաց ընըմ։ Մտածում ա, թա՞ ըշտե՞ղ քյնա՞, հո՞ւնց ապրե։

Վերչը էտ տղան ըտեղ ծուկըն ա փրոնըմ, կրակ անըմ, մին թՅհրՅավ ապրըմ։

ՔյնՅամ ա ծմական ճպատ քաղըմ, խեչակ կտրում, պՅուրՅում կյետեն քշտեն մին կուճուր տոն շինըմ, վեր մաչին յոլա քյնՅ։ Տոնը շինիլանը ետը Սարումը քյինՅամ ա վրերսի, ղուշա, ծրտա, ծՅուկընա փոնըմ, պՅուրում, տրանավ ապրըմ։ Մեհեթ Սարումը քյնՅամ ա վրերս անիլ։ ՈՅրՅուգյունը կյամ ա տոն, պրանվում, ըսկսում մտածելը, վեր հՅարը խե՞ ուրՅան տանան տյՅուս քցից։ Ասըմ ա. «ԷքՅուծ քյննՅակՅան ըմ ընդեղ, ըշտեղ գյՅուլլՅաս վեր ա ընգալ, տրեսնամ գյՅուլլՅան ընդեղ ա՞, յոր օնիմ»։ Շատ մտածելանը ետը Սարումը քոն ա ինՅում։ Քըշերավը եր ա կենում, իրեսը լվանըմ, մին պատառ տեսա-տենա օտրըմ, քյնՅամ։

ՔյնՅամ ա, քյնՅամ, հասնըմ գՅուլլՅան վեր ընգած տեղը, տրեսնըմ մին կյեռթնուկու պուն։ Էտ պՅունին ըռաչին մին կյեռթնուկ վեր ընգյած, գյՅուլլՅան էլ քշտեն։ Սարումը մին պատառ վրենն ա կենում, ասում. «Ըստի բախտը մզոված, հՅալբՅաթ իմ ճկատեն էլ էս ա կյըրվՅած, իմ փայս էլ էս կյեռթնուկն ա»։ Ասում ա պրծնում, կյեռթնուկը յոր օնում, բեքեփ պՅուրում տոնը, թող անում, քցում կարավաթեն տակը։ Սարումը խիլլՅ վախտ իտի ապրըմ ա։ Քյնամ ա վրերս անում, ինքը խորագյ, պեն շինում, կլՅոխը պահում։ Մեհեթ Սարումը վրրսըտրեղա կյամ ա տոն, ղուշերը տնՅում տանը, ինքյը քյնում կյետեն կոշտը, վեր ծՅուկուն փոնե։ ՈՅրՅուգյունը մթեն կյամ ա տոն, տրեսնում կրակը նիկցրած, խորՅագյը իփած, տոնը սրփած։ Սարումը մնըմ ա ղըրմացած։ Ասըմ ա. «Էս հի՞նչ պեն ա, էս հո՞ւ բիդի ըստրեղ կյա, հո՞ւվ ա ըստեղ ճնանչում»։ Հացա, պենա օտում ա, քոն ինՅում։ Քշերավ եր ա կենում, քյնՅամ ծմակը՝ վրերս անի։

ՈՅրՅուգյունը կյամ ա, տեսնում էլհա տոնը սրփած, կրակ ըրած, խորՅագյը իփած։ Կըզնըվում ա, ասըմ. «Ըստրա բուսը պըհլական ըմ, փոնիմ, տրեսնամ էս հո՞ւվ ա, հինչացո՞ւ վա՞, վեր կյամ ա ամուն օր նի մննում տոնըս»։ Սարումը էն մին օրը տանը մաչին կյողլ ա կենըմ, եշըմ, տեսնըմ կարավաթեն տական մին ղՅաշանգյ ախճիգյ ա տՅուս կյամ, տոնը սրփըմ, խորՅագյը իփըմ, ինքյն էլ նրեստա պատառ օտրըմ, պըրծընում, թա կյա նի մննե կյեռթնուկեն մորթեն, էտ վախտը Սարումը տրան փոնում ա, ասըմ. «Տու հո՞ւ վրս, հի՞նչ ըս անըմ ըստեղ»։

Թողնում չի վեր էն ախճիգյը տանան տՅուս կյա։ Կյեռթնուկեն մորթեն քցում ա կրակը, էրում։ Էտ ըխճկանը անումը Գյուլվարթ ա ինՅում։

Սարումը շատ ա ուրախանում, ըտրանավ։ Մեհեռ էլ մին քանե մարթ կյեռավրն ընցնում ըն, կյամ, տեսնում Գյուլվարթը տանը ակուշկավը ինգած երք ա ասում։ Նահանց էտ երքը շատ տուր ա կյամ։ Ասում ըն. «Տոռնը պեց անինքյ, տեսնանք էս ղրաղ տրեղս մինակ հի՞նչ պենի յա»։ Ամմա Գյուլվարթը տոռնը պենում չի։ Էտ մարթիքյը հըրցըփորց ըն անում, գյուդում, վեր տա Սարումեն կնեգյն ա։ Նահանց աշկը յոր չօնում վեր Սարումը ղաշանգյ կնեգյ օնե։ Ասում ըն. «Քյնանք, թաքավերեն ասինքյ տղատ մին կնեգյ օնե, վեր ընդրամնանը ինիլ չի՞»։

Էտ մարթիքյը քյունում ըն թաքավերեն ասում. — Թաքավերը ապրած կենա, Սարումը մին մարալ կնեգյ օնե, ուրանք էլ էն ա մին ղրաղ տրեղ մին տոն շինած, լավ ապրում ըն։

Թաքավերը, վեր ըսկանում ա, կանոխ տղեն ծեն ա տամ, պուրում ուրան պալատը, ասում ա. — Ա՛ տղա, քյնա ինձետե մին նոռնը ճարե պեր, վեր հինչքան ժողովուրթ կյա, հվաքվե, հինչքան օտին, ամմա նոռնը պրծնե վուչ։ Թա ասածս ըրեր վուչ, գյիդա վեր տու սաղ ապրըլական չըս, յա էլ կնեգյըտ ծեռքատ ինգյլական ա։

Սարումը մըտրծելավ կյամ ա տոն, ըեքեփ նստում, հաց էլ չի օտում։

Գյուլվարթն ասում ա. — Խե՞ տի ըեքեփ ըս, Սարում։

Սարումն ասում ա.— Իմ հա՞ր հանց պեն ա ինձ ասալ, վեր ուրան հետի տանիմ, վեր ըշխարքումս ինդի պեն ճարվիլ չի՞։

Գյուլվարթն ասում ա. — Վախում մեր, տու ասե, տեսնամ հի՞նչ ա ասալ, յըես կճարիմ։

Սարումն ասում ա. — Մին նոռն ա օղալ, վեր սաղ ժողովրթը օտեն, ամմա պրծնե վուչ։

Գյուլվարթն ասում ա.— Վախում մեր, քյնա՞ էն պունին առաչը, վեր գյուլլաշտ ընդեղ ա իլալ վեր ընգյած, յըես էլ ընդրեղ ըմ իլալ, պունին առաչեն վրենը կաց, պապե ծեն տու։ Վեր ծեն տաս, պունան մին պառավ կյերթնուվ ա տունս կյլական։ Էն իմ պապես ա, կասիս թոռնըտ հիվանդ ա, մին նոռն ա օղալ, նա ըշտղա վերե յա քթընական ա, քյրեզ տա, տու վել յոր կօնիս, կյաս ըստրեղ, ըստղան էլ տանիս տաս քու հոր։

Սարումը օրախ-օրախ քյնամ ա Գյուլվարթին ասած պունին առաչը, «պապե» ծեն տամ։

Պյունան մին պառավ կյերթնուվ ա տունս կյամ, ասում. — Տու հու՞վ ըս, հի՞նչ ըս ասում։

Սարումն ասում ա. — Պապե թոռնըտ հիվանդ ա, պեն չՀտըմ, ասում ա՝ քյնՀցեքյ իմ պապու ըսեցեքյ մին նոռնը ղարկե, օտիմ։

Էտ պառավ կյեռթնուվը նի յա մննում պՀունը, մին պատառ կենում, մին նոռնը ծեռքեն պուրՀում ա տամ Սարումեն, ինքյը նի մննում պՀունը։

Սարումը ուրխացած նոռնը յոր ա օնում, կյամ տոն։ Գյուլվարթն ասում ա. — Դե տար, տո քու հոր, ծեռքան ըզադվե։

Սարումը նոռնը յոր ա օնում, տանում տամ թաքավերեն։ Թաքավերը սաղ ժողովրթեն ծեն ա տամ, պուրՀում։ Ասում ա. — Էտ նոռնը կերեքյ։

Ժողովուրթը ըսկսում ա նոռնը օտելը, ամմա նոռնը պրծնում չի՞։ Թաքավերը ժողովրթեն յրան կըզնվում ա, ասում. — Էս սհաթեն հենց կերեքյ, վեր յրան մին գյուլՀուլ էլ չի մնա։ Ժողովուրթը հիշքան օտում ա, նոռնը պրծնում չի։ Թաքավերը շատ ա կըզնըվում։ Նի յա մննում պալատը, տղեն ծեն տամ կոշտը, ասում. — Սա՛ռում, մին պեն էլ ասիմ, վար կարաս վեչ անիս, քյըեզ թուղլական չըմ սաղ կենաս։

Սարումն ասում ա. — Ասե, տըեսնամ մՀենգյ հի՞նչ ըս ասում։

Թաքավերն ասում ա. — Քյինա՛, մին գյա՛ռա պեր, վեր սաղ ժողովուրթը յրան նստե, էլՀա տեղ ինի։

Սարումը էլՀա բըքյըփանում ա, կյամ տոն։

Գյուլվարթն ասում ա. — ՄՀենգյ հի՞նչ ըս քնենքյ անում, մըՀենգյ էլ քու հոր ասածը ըրալ ըս։

Սարումն ասում ա. — ՄՀենգյ էլ իմ հա՛ր ասում ա. «Քյնա՛ մին գյա՛ռա պեր, վեր սաղ ժողովուրթը յրան նստե, պրծնե վուչ»։ Թա վեր կարամ վեչ քթենամ, թաքավերը կյլական ա ինձ սպանե, քյըեզ էլ տանե ուրա՛ն հետե։

Գյուլվարթն ասում ա. — Սարում, վախում մեր, քյնա՛ էլՀա իմ պապու ասե, էն տլական ա։

Սարումն ասում ա. — Պա հի՞նչ ասիմ։

Գյուլվարթն ասում ա. — Քյնա էլՀա էն պՀունին առաշկը «պապե» ծեն տո։

Սարումն իտի էլ անում ա։

Պապեն տՀուս ա կյամ, ասում. — Հի՞նչ ըս ասում։

Սարումն ասում ա.— Պապե, թոռնըտ հըրսնքեն ա, մին գյաբա՛ յա օզալ, վեր վեչ մին տեղ ինգի ինի վուչ։

Էտ պառավ կյերթնուվը նի յա մննում պՀունը, մին պատառ կենում, տՀուս կյամ, գյա՛ռան ծեռքեն։ Գյա՛ռան տամ ա Սարումեն,

ասում. — Տար տո թոռանը, համ էլ ասե պապեն ասալ ա շընհավուր ինի։

Սարումը ուրխացած գյաբան յոր ա օնում, կյամ տոն, տանում տամ թաքավերեն։ Թաքավերը գյաբան յոր ա օնում մեկնում, սաղ ժողովրթեն ծեն տամ, ասում.— Գյաբեն յրա նստեցեք։

Ժողովուրթը հիշքան նստում ա, գյաբան թազադան ա ծալերը ետ տանում, տեղ անում։ Թաքավերը շատ ա կըզնըվում։ Գյաբան յոր ա օնում, քյնամ ուրան պալատը։ Թաքավերը քնենք ա անում, թա մհենգ հի՞նչ ասե տղեն, վեր կարի վուչ անե։ Թաքավերը քըշեր-ցիրեկ մետք ա անում, մետք, վերչը Սարումեն ծեն ա տամ կոշտը, ասում. — Էս իրեքինշինն ա, վեր կրեցիր կըգարիս, գյիդա վեր սաղ ըս կննական, կնեգյըտ էլ քունն ա, ամմա վեր կդարիս վուչ, էն վախտը յրես կգյիդամ՝ հինչ կանիմ։ Մհենգ քյնա սրեվ աշխարքը, էն ա քու նանեն ընդեղ մեր վրեսկուն ըմբարեն պինալին ծեռքեն։ Երկալ պեր։

Սարումը ասում ա. — Պա յրես հո՞ւնց քյնամ սրեվ աշխարքը։

Թաքավերն ասում ա — Ըտ էլ տու յրս գյուդրում, հունցու պուրում ըս, պեր։

Սարումը լաց ինիլավ կյամ ա տոն, ասում ա. — Գյուլվարթ, ումեդտ ինձանա կտրե, իմ հաբ հանց պեն ա ասալ, վեր կարըմ չըմ անիմ։

Գյուլվարթն ասում ա. — Հի՞նչ ա ասալ։

Սարումն ասում ա. — Վեր ուրան ասած գյաբան տարե, թաքավերը կըգնըվեց, ինձ ծեն տուվավ պալատը, ասից, վեր քյինի սրեվ աշխարքը քու նանու ծեռքեն վրեսկու ըմբարեն պնալին պեր։

Գյուլվարթն ասում ա.— Վեչինչ, ըտրեղ էլ ըս քյննական, վեր ինձ անջուկ օնիս։

Սարումն ասում ա. — Հինչքան անջուկ օնիմ, կվախիմ քյնամ սրեվ աշխարքը։

Գյուլվարթն ասում ա. — Վեչինչ, վախիլ չըս, կքյնա։

— Վերչը ասե տեսնամ, հո՞ւնց քյնամ։

— Քյնա էլհա իմ պապու կոշտը, ասե ստի պեն կա, օղում ըմ քյնամ սրեվ աշխարքը, ամմա հըղեն ճնանչըմ չըմ, համ էլ վախըմ ըմ։

— Լավ, էտ էլ կանիմ, թաքյի իմ կռապաշտ հորս անա ըզադվիմ։

— Վեչ մին վախտ վախիս վեչ, ըրխային քյնա, իմ պապեն գյուդում ա հի՞նչ ա ընանակա՞ն։

Սարումը հաց ա օտում, հաց յոր օնում, քյնամ կյեռթնուկեն պունին առաչը, «պապե» ծեն տամ։

Մին խիլլա վրենն ա կենում, վրեննը, ամմա կյեռթնուկը տունս չի կյամ։ Սարումն ասում ա. —

— Մհենգյ վեր կրլական չըմ իմ հոր ասածը անիմ։ Պրանվում ա ըտրեղ քնավ ընցնըմ, սաղ քշերը ըտեղ քոն ա ինում։ Քշերավը եր ա կենըմ, էլհա «պապե» ծեն տամ։ Կյեռթնուկը տունս ա կյամ, ասըմ. — Հի՞նչ ա։— Սարումը լոխ նաղլ ա անըմ, ասըմ, վեր, օղըմ ըմ քյնամ սրեվ աշխարքը, ամմա գյուդում չըմ հո՞ւնց քյնամ։ Էտ կյեռթնուկը նի յա մննում պունը մին պատառ վախտ ընցած տունս ա կյամ մին յաշիգյ ծեռքեն։ Սարումին ասըմ ա. — Նի մըտ մաչը տանիմ, թողիմ սրեվ ըշխարքըմը, յըես կյամ։

Սարումը յաշիգյումը պրանվում ա. կյեռթնուկը շլակում ա, հղե ինում։

Շատ ա կյամ, խրեգյ ա կյամ, վերչը հըսնըմ ա սրեվ աշխարքը։ Յաշիգյը վեր ա տինում, մին պատառ գինշանում, էլհա շլակում, հղե ինում։ Մին պատառ էլ ա քյնամ, սրեվ ըշխարքեն տոնը պենում, յաշիգյը վեր տինում, Սարումը յաշիգյան տունս ա կյամ, մին պատառ գինշանում, կյեռթնուկը ասում ա. — Հասե սրեվ աշխարքը։ Սարում, քյնա, ամմա քյնալիս հետատ լոխ ծեն ըն տլական, վեչ մինին անջուկ չունես, թա չէ, տու էլ մեռալ կտեռնաս։

Կյեռթնուկը ըտի յա ասըմ, պրծընըմ, ետ տեռնըմ, ուրան պունը կյամ։ Սարումը հղե յա ինըմ րիգի նանուն կոշտը, շոռ ա կյամ քթենա, նանեն հրեռե յա ընում թաղված։ Ըռշկեն մին կյետ ա ինում, կըրմունջեն քրերավը ընցնըմ ա, օղըմ ա վրեննները հանե։ Էտ վախտը կյետեն զրաղեն մին պառավ մարթ ա ինում, տա թողում չի, վեր Սարումը վրեննները հանե։ Էտ պառավ մարթը ասըմ ա. — Հանել մեր։

Սարումն ասըմ ա. — Պա հո՞ւցն կյետը ընցնիմ։

Էն մարթն ասըմ ա.—Եկ մաչաս ճղե, տիր կյետըմը, քարվազ շինի, ընցեր։

Սարումն ասըմ ա.— Խե՞ տու ինձ հի՞նչ ըս ըրա՞լ, վեր յըես քյըեզ տի անիմ։

Պառավն ասըմ ա. — Վեչինչ, տու հունցու ասըմ ըմ, ինգի ըրա։ Քյնա, կյալիս կասիմ, խե՞ յըմ տի ասըմ։ Սարումն էտ մարթին մաչան ճըղըմ ա, քցում կյըետը, քարվազ շինում, ընցնում։

Քյնամ ա, քյնամ, տրեսնըմ ա մին կանանչ տեղ մին մարթ նստած, ամմա ընդրա կլոխը պղուճնեն օտըմ ըն։

Սարումը մնամ ա ըրմացած։ Ասըմ ա. — Դայի, ախեր էն ա աշկերըտ պեց, տու սաղ, պա խե՞ թողըմ ըս կլոխտ պղուճնեն օտին։

Էն էլ ասում ա. — Վեչինչ, քյնա՜, ետ տռնալիս ըռաշկավս կկյա՜ս, կասիմ։

Սարումը տրան էլ ա թողում ըտեղ, քյնում։ Մին պատառ քյնամ ա, տեսնում մին կնեգյ թռռնեն հաց ա թխում։ Քշտեն հացը կյուտած, ամմա ինքյը ասում ա.— Վա՜յ, սոված մըեռե՜, վա՜յ, սոված մըեռե՜։

Սարումն ասում ա.— Բիբի, խե՞ յը՜ս սոված մըեռնըմ, հատե կոշտըտ հացավ լիգյը, կեր, քշտաց։

Էտ կնեգյը Սարումեն ասում ա. — Քյնա, ետ կյա՜լիս, կասիմ։

Սարումը ըտրան էլ ա թողում, քյնում։ Քյնա՜մ ա տըեսնում մին հըղրցում մին կնեգյ նստած մին կուտուր հաց ծեռքեն, ասում ա. — Վա՜յ փորս տրաքի՜ց, էսքան հաց կոտի՜ն։— Էտ կնեգյը Սարումեն ասում ա. — Բալա, սոված կինիս, տանիմ տոն, հաց տամ։

Սարումն ասում ա. — Սոված չըմ, էնա հաց օնիմ։

Էտ կնեգյը շատ ա օղըմ լոխճին տանե ղոնաղ։

Սարումն ասում ա.— Բիբի՛, մին թիքյա հաց օնիս, տա վեր օրիշի տաս, պա տու հի՞նչ ըս ուտլական։

Էտ կընեգյը ասում ա. — Քյնա, ետ կյա՜լիս կասիմ։

Սարումը քյնամ ա, տըեսնըմ էրկու ղա՜շանգյ վարթ ուրուր քշտե փսած, ամմա էտ վարթերեն մաչ տեղը մին փոշ էլ կա փսած։

Սարումն ասում ա. — Ա՛ վարթեր, տուք շատ ղա՜շանգյ ըք, խե՞ թողալ ըք էտ փոշը էտ մաչ տըեղը փսնի։

Էտ վարթերն ասում ըն.— Մունք հի՞նչ մեղավեր ընք, վեր ըստեղա փսալ էտ փոշը։ Քյնա՛, ետ տրեռնալիս կասիմ, թա էս հի՞նչ փոշ ա, վեր թողում չի ուրկոքանս ուրուր քշտի ինինքյ, վեր խոսինքյ։

Սարումը էտ վարթերեն էլա թողում, քյնա՜մ։ Քյնամ, ա քյնա՜մ, տրեսնըմ մին գոուզ տրեղ ուրա՜ն նանեն մին լա՜վ ծառու շոքըմ նըստած, չխարակ ա մանըմ։

Սարումը ծեն ա տամ, ասըմ. — Նանե, Սարումն ըմ, եկալ ըմ քյըեզ տանիմ։

Նանեն կյամ ա Սարումեն անա պչպչորում, քշտեն նստըցնըմ ա, ասըմ. — Հինչո՞ւ վը՜ս եկալ, հի՞նչ կա էս սրեվ ըշխարքումս։

Սարումն ասում ա. — Նանե, յըես ու յըես չըմ եկալ, ապան ա ղարկալ, թա քյնա՜ սրեվ աշխարքը, էնա վրեսկուն ըմբարեն պինա՜լին նանուն քշտեն, եր կալ պեր ըստեղ, հարկավեր ա։

Սարումը վեր տի յա ասում, նանուն կրղնըվոցը կյամ ա Սարումեն յրա։ Ասում ա. — Խե՞ քու հոր խոսկավ ըս ընգալ, էն օղըմ ա վեր քու կլո՜խտ վարե, տրա մըհար էլ քյըեզ ղըրկալ ա սրեվ աշ-

խարքը, հանցու վեր տու էլ մրեռալ տրեռնաս ըստեղ։— Նանեն թաքավերեն շատ ուշունց ա տամ։

Սարումն ասըմ ա. — Նանե, պնալին ինձ տո, քյնամ։

Նանեն ասըմ ա.— Պինալին իմ ծեռքես չի, էն ա սրահումը մին սուլթունու տակե, վեր քյնաս, յոր կանիս, վեչ մինին տաս վեչ։ Դե մհենգյ կանուխ ըրա, քյնա։

Սարումն ասըմ ա.—Սրերտս օղում ա, պապեն տրեսնամ ըշտե՞ղ ա, քյնամ տեսնամ, էլհա կյամ։

Նանեն ասում ա. — Էս ծառեն թուշավը կըլխյեր քյնա, ընդեղ ա։ Էն վեր ծոխ ա պըցրանում։ Սարումը քյնամ ա թուշ ծոխեն յրա, տրեսնըմ վեր մին կրակ էնա նիկացած, ուրան պապեն էլ էտ կրակումը էրվում ա։

Սարումն ասըմ ա. — Էս հի՞նչ անիմ, վեր իմ պապեն կրական տուս օնիմ։

Սկսում ա «պապե» ծեն տալը, ամմա պապեն ըսկանըմ չի, ալավը լափ պըցրանըմ ա, Սարումը կարում չի պապուն տրեսնա, կյամ ա ետ Նանուն կոշտը, ասըմ. — Նանե, պա կըրեցե վուչ պապեն տրեսնամ, էս հի՞նչ անիմ պա։

Նանեն ասըմ ա. — Վեչինչ, կանուխ ըրա էս սրեվ ըշխարքան տուս եք, քյնա։

Սարումը Նանուն նհետ ծեռք ա տամ, Նանեն ընդրան պչպչորում ա, թաքավերեն անեսկ տալավ Սարումեն ասում ա.— Քյնա, ամմա հունց վեր ըսեցի, ընդի կանիս, հանցու էս սրեվ ըշխարքան տուս կյաս, վախի՞ս վեչ, քմակատ ծեն ըն տլական, վեր «եք մեր կոշտը», ամմա դրրետ եշիս վե՞չ, կլոխտ քաշ քցած, քյնա։

Սարումը քյնամ ա։ Առաչինը պտահում ըն էն վարթերը, վեր շատ ղաշանգյ ըն, ամմա ուրանց ղաթըմը փոշ ա փսած։ Սարումն ասում ա. — Դե ըսեցեքյ տեսնամ հի՞նչ ըք ասըմ։

Էտ վըրթերեն մինն ասըմ ա. — Հի՞նչ ասինքյ, մունք լուս ըշխարքումը վխտեն մըրթըկնեգյ ընք իլա, ուրուր նհետ շատ սիրավ ընք իլա, ամմա մրեր սկեսուրը մին կռապաշտ կնեգյ ա իլա, օզա ա, վեր մունք ուրուր նհետ լավ չինինքյ, կրռև անինքյ, նշանածրս ինձ թակե։ Ըսկեսուրս ամեն վախտ ուզեցալ ա մեր մաչը կրռև քցի՞, ամմա մունք կրռև չընք ըրա՞լ։ Մհենգյ էլ լուս ըշխարքան եկալ ընք սրեվ աշխարքը, էլհա իմ ըսկեսուրրս եկալ ա փոշու նման մեր ղաթըմը փսալ, թողում չի, թա լհա ըստեղ ինի, ուրուր նհետ խոսինքյ, մոտիկ ինինքյ։

Սարումն ասում ա.— Վերջը մղափուն տուք, վեր էտ ցաքին փոշը ծեր ղաթումն ա։— Սարումը ըտի յա ասում, պրծնում, քյնամ։

Քյնամ ա հասնում ընդեղ, վեր մին կնեգյ մին կուտուր հաց ծեռքեն ասում ա. — Վայ փորս տրաքի՞ց,— համ էլ ղարիր հըղըցավերեն, քյնող-եկողու օղում ա տանե տոն, ղոնաղ անե։

Սարումն ասում ա.— Բիրի՛, դե ասե, տըեսնամ էտ խե՞ յըս իտի անում։

Էտ կնեգյը ասում ա. — Բալա շան, հի՞նչ ասիմ, լուս ըշխարքումն ըմ իլա՛լ, աշկս ուրուշու յրա չի իլա՛լ, վեր ծեռքես մին կուտուր հաց ա իլա՛լ, հուրու վեր տեսալ ըմ, տարալ ըմ հաց տուվալ, լոխ էլ մնացալ ըն ինձանա շընուրհակալ, մհենգյ էլ եկալ ըմ էս սրեվ աշխարքը, էլհա աշկս կոշտ ա, ծեռքս պեց, աշկս ուրուշու յրա չի, կողի տանս մին կուտուր հաց չինի՞, էլհա ինձետե վրեչի՞նչ։

Սարումը ասում ա. — Էտ ա յրես էլ ըմ շնուրհակալ քյըզանա, վեր իտի կնեգյ ըս, ինձ օգում ըս տանիս, հաց տաս։

Սարումը էլհա քյնամ ա էն կնգանը կոշտը, վեր քշտեն ցորեն հացը լիգյնա ինում, ամմա ասում ա. — Վայ աստու՞ծ, սուված մրեռե՞։

Սարումը ասում ա. — Բիրի, խե՞ էտ բոլ հացան օտում չը՞ս, քշտանա՞ս, պա էտ քու հացտ չի՞։

Էտ կնեգյն ասում ա.— Հինչու դուզն ա, դուզն ասիմ, յրես սոտը ասել չը՛մ։ Բալա, յրես լուս ըշխարքումն ըմ իլա՛լ, տոնս հացավ, դանավ լիգյն ա իլա՛լ, ամեն հինչավ լիգյն ա իլա՛լ։ Դե հի՞նչ անիս, վեր աշկս ծակ ա իլա՛լ, աշկս ուրուշու յրան, փորս սուված, ծեռքըս պատ չար կյամ, թա էնքան հացան մին պատառ կտրիմ, օտիմ։ Ուրուշու անա յի օգըմ օտըմ, մհենգյ էլ եկալ ըմ սրեվ աշխարքը, էլհա ինդի յըմ, աշկս ուրուշու յրա յա, կոշտս հացավ լիգյը, կարըմ չըմ մին պատառ օտիմ էս ցորեն հացան։

Սարումն ասում ա. — Դե իտի յրս սրվերա՞լ, պրծա՞վ, էլ կարել չըս սրվերածըտ թորա անիս։

Սարումը էտ կնգանը թողում ա, քյնամ։

Քյնամ ա էն մարթին կոշտը, վեր աշկերը պեց ա, ինքը սաղ, ամմա պղուճնեն կլոխն օտում ըն։

Սարումը քյնամ ա էտ մարթին քշտին մին խիլլա՛ վրեննը կենում, պրծնում, ասում.— Դայի, տու ասե, տըեսնամ խե՞ յըն էտ պղուճնեն քյըեզ օտըմ։

Էտ մարթն ասում ա. — Բա՛լամ, էն լուս ըշխարքումն ըմ իլա՛լ, ինձհետե ապրալ ըմ, իմ հացս կերալ, իմ ճրաքյս էրալ, ամմա միշտ

էլ ուրուշու անա յըմ խոսալ, ուրուշու վրետան տակ ըմ քանգալ, մհենգյ էլ եկալ ըմ սրեվ աշխարքը, հուր վրետան տակ քանգալ ըմ, նահանք եկալ ըն կլոխս ծակալ, օտում ըն։ Ցրես էլ էն ըմ սաղ, ամա կարում չըմ տեն անիմ։

Սարումն ասըմ ա. — Էտ դուշմաննիտ ըն եկալ, քյըեզ օտում ըն։

Ասըմ ա, պրծնում, քյնամ էն մարթին կոշտը, վար մաշան ճըղալ ա, տիրալ կյըետումը, ընցալ։

Էտ մարթն ասըմ ա. — Բա՛լամ, հի՞նչ ասիմ, քյըեզ նման շահիլ վխտես, մին տեղ քյինալիս մին կյետ ա պտահալ, վեր կըրացալ չըմ ընցնիմ։ Ուզեցալ չըմ վեններս հանիմ։ Կետեն զրաղեն մին պառավ մարթ ա իլալ նստած։ Էտ մարթին մաշան կես ըմ ըրալ, քցալ կյետը, ընցալ։ Դե մհենգյ էլ եկալ ըմ սրեվ աշխարքը, ըրածս առաշկս ա եկալ։

Սարումը էլ ետ չի եշըմ, կյամ ա, թա՞ սրեվ ըշխարքան տուս կյա, էտ վախտը սրեվ ըշխարքան հետան ծեն ըն տամ, ասում. — Ե՛ք քշտընե՞ս։

Ամմա Սարումը ուրան նանուն ասածը մենն ա քցում, դրետ եշում չի՞։ Սարումը կյամ ա սրեվ ըշխարքան տուս կյամ, կյամ տոն։ Գյուլվարթը հրցնում ա, թա. — Ախրը պնալին պերալ ը՞ս։

Սարումն ասըմ ա.

— Հի՞նչ պինալի յա՞, հի՞նչ պեն, հի՞նչ դարդ նան զաղար, իմ հար ուզեցալ ա կլոխս վարե, ամմա կարից հուշ, քյնացալ ըմ նանուն կոշտը, ասալ, իմ հար պընալին օգալ ա։ Նանեն ասալ ա, պնալին էնա տռանը սութունեն տակեն, քյնա տու եր կալ։ Սարումը քյնամ ա հորը տոնը, տրեսնում հարը մռնելու յրա յա, շատ ա ուրխանում, շադդաղ անըմ։ Ասըմ ա.

— Էս լոխ նանուն պեներն ա, վրեսկեն լոխ յրես յոր կանիմ։

Սարումը հորը տանը պատառ կենըմ ա, տրեսնում, վեր հարը մեռնըմ ա։ Հորը մրռնելանը ետը Սարումը ախպորցը նհետ հորը տանըմ ա, թաղում, կյամ պալատը, ախպորցը տուս անըմ, պրծնում, քյնամ ուրան տոնը, Գյուլվարթին ասըմ, վեր իմ հար մրեռել ա, տարալ ընք թաղա՞լ։ Գյուլվարթը շատ ա ուրխանըմ, ինքը նան Սարումը կյամ ըն թաքավերեն պալատը։ Սարումը քյնամ ա վրեսկուն պնալին սութունեն տական տուս անում, պրծնում, վրեսկեն տուս տամ, կեսը քյսիրներեն պրժենըմ, կեսն էլ ուրանց մհար պահում։ Ընդետանը ըսկսըմ ըն լավ ապրիլը, ժողովուրթեն լավ եշիլը։

Ըստուծանա իրեք խընձոր ա եր ընգնում. մինը՝ ըսողեն, մինը՝ լսողեն, մինն էլ՝ կյրողեն։